

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր երկրի հետ է սահմանակցում Իտալիան:

1. Սլովենիայի
2. Խորվաթիայի
3. Լիխթենշթայնի
4. Սլովակիայի

2. Ո՞ր տարբերակի երկու երկրներում էլ բնակչության մեծամասնությունը տրված կրոնական ուղղության հետևորդ է:

1. Հունաստան, Ռումինիա-ուղղափառություն
2. Ինդոնեզիա, Իրան – շիականություն
3. Շվեդիա, Պորտուգալիա- կաթոլիկություն
4. Թուրքիա, Նեպալ – սուննիականություն

3. Ո՞ր տարբերակում են ճիշտ դասավորված երկրները՝ ըստ ուրբանիզացման մակարդակի՝ նվազման կարգով:

1. ՀՀ 2. Ֆրանսիա 3. Եթովպիա 4. Սինգապուր

1. 4, 1, 2, 3
2. 3, 2, 1, 4
3. 4, 2, 1, 3
4. 1, 2, 3, 4

4. Նշված երկրներից ո՞րն է ավելի խտաբնակ:

1. Մավրիտանիան
2. Կանադան
3. Մոնղոլիան
4. Ճապոնիան

5. Ո՞ր երկրի հետ Ֆրանսիան բնական (լեռնագրական) սահման չունի :

1. Իտալիա
2. Իսպանիա
3. Գերմանիա
4. Բելգիա

6. Աշխարհի բնակչության ո՞ր տոկոսն է ապրում քաղաքներում:

1. 40-ից պակաս
2. ավելի քան 50
3. 65-70
4. 75-ից ավելի

7. Վառելիքի նշված տեսակներից որի՞ ջերմային գործակիցն է մյուսներից ավելի փոքր:

1. այրվող թերթաքարի
2. փայտի
3. տորֆի
4. գորշ ածխի

8. Նշված երկրներից ո՞րն ունի ՄՁՀ-ի ամենաբարձր ցուցանիշը:

1. Արգենտինան
2. Բրազիլիան
3. Եթովպիան
4. Հնդկաստանը

9. Տրվածներից ո՞րն է հիմնական ռասա:

1. սուդանյան
2. սամբո
3. ամերիկանոիդ
4. ուրալյան

10. Բնության նշված բաղադրիչների գուգորդումների (բնական զոնա - բուսական աշխարհ - կենդանական աշխարհ - հող) ո՞ր շարքում սխալ կա:

1. տայգա – մայրի – իշայծյամ - պողոզոլային հողեր
2. մուսսոնային անտառներ – հնդկակաղնի – անտառային խոզ – դեղնահողեր
3. խոնավ մերձարևադարձային անտառներ – դափնի – հեպարդ – դարչնագույն հողեր
4. հասարակածային խոնավ անտառներ – արմավենի – կապիկ – լատերիտային հողեր

11. Տրված առանձնահատկություններից ո՞րը Հայկական լեռնաշխարհին բնորոշ չէ:

1. Բարձր դիրքադրություն ունի հարակից շրջանների նկատմամբ:
2. Լավ արտահայտված է վերընթաց գոտիականությունը:
3. Հայկական լեռնաշխարհը եզրավորող լեռնաշղթաները առավելապես ունեն հրաբխային ծագում:
4. Ցայտուն արտահայտված է երիտասարդ հրաբխականությունը:

12. Առաջին անգամ էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների քննարկումը ՄԱԿ-ի մակարդակով, տեղի է ունեցել՝

1. 1972 թ-ին
2. 2002 թ-ին
3. 1992 թ-ին
4. 2012 թ-ին

13. Օդում, ջրում, հողում և սննդամթերքի մեջ վնասակար նյութերի այն քանակությունը, որի ազդեցությունը որոշակի ժամանակահատվածում մարդու առողջության համար վտանգավոր չէ և չի հանգեցնում աննպաստ հետևանքների, կոչվում է՝

1. ՀԱԵ
2. ՍԹԽ
3. ՀՆԱ
4. ԳՏՀ

14. Տարբերակներից որո՞ւմ անհամապատասխանություն կա:

1. բազմամետաղներ-Ախթալա, Շահումյան
2. երկաթ-Սվարանց, Թեժ լեռ
3. ոսկի- Մեղրաձոր, Սոթք
4. պղնձահրաքար- Ալավերդի, Կապան

15. «Գետ—ջրվեժ» զույգերից ո՞րն է սխալ:

1. Ճորոխ- Օլթի
2. Որոտան-Շաքի
3. Չիչկան-Թոչկան
4. Արփա- Ջերմուկ

16. Նշված ցուցանիշներից ո՞րը չի օգտագործվում ՄՁՀ-ի հաշվարկի ժամանակ:

1. երկարակեցությունը
2. կրթվածությունը
3. մեկ շնչին ընկնող ՀԱԱ-ն
4. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն

17. Տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդրի լուծման ուղիներով ո՞ր կազմակերպությունը չի զբաղվում:

1. ՆԱԵԿ-ը
2. ԵԱՀԿ-ն
3. ՆԱՏՕ-ն
4. ՄԱԿ-ը

18. Տրված երկրներից ո՞րն է ՄԱԿ-ում հանդես գալիս դիտորդի կարգավիճակով:

1. Ալբանիան
2. Պաղեստինը
3. Զամբիան
4. Վրաստանը

19. Ո՞րը ջրի արհեստական մաքրման եղանակ չէ:

1. մեխանիկական
2. ֆիզիկաքիմիական
3. կենսաբանական
4. գենետիկական

20. Ըստ նշանակության ինչպիսի՞ անտառներ չկան:

1. ջրապաշտպան
2. հողապաշտպան
3. կլիմայաստեղծ
4. կայծակապաշտպան

21. Ինչպիսի՞ ռեկրեացիոն ռեսուրսներ չկան:

1. կրթական
2. մարզական
3. բուժիչ
4. կազդուրիչ

22. «Տարածաշրջան-պետություն-մայրաքաղաք» շարքերից որո՞ւմ անհամապատասխանություն կա:

1. Հարավային Ասիա-Նեպալ-Թիմփու
2. Հյուսիսային Եվրոպա- Նորվեգիա-Օսլո
3. Լատինական Ամերիկա-Նիկարագուա-Մանագուա
4. Ավստրալիա և Օվկիանիա- Տոնգա-Նուկուալոֆա

23. Հետևյալ բնակավայրերից որո՞ւմ երկաթուղային կայարան կա:

1. Վայքում
2. Ջերմուկում
3. Կապանում
4. Սիսիանում

24. «Երկիր—տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիա» գուգակցություններից ո՞րն է սխալ:

1. Չիլի-գծային
2. Նորվեգիա-գծային
3. Գերմանիա-բազմակենտրոն
4. Արգենտինա-բազմակենտրոն

25. Կապի տեսակներից ո՞րի բնորոշումն է սխալ:

1. ավանդական – հեռուստատեսություն
2. ժամանակակից – մանրաթելաօպտիկական
3. ավանդական — արբանյակային
4. ժամանակակից — հեռապատճենային

26. Ո՞ր տարբերակում նշվածները «գրոսաշրջիկներ մատակարարող» երկրներ չեն:

1. ԱՄՆ և Գերմանիա
2. Մեծ Բրիտանիա և Ռուսաստան
3. Բելգիա և Դանիա
4. Ֆրանսիա և Իսպանիա

27. Ո՞ր շարքի բոլոր երկրների բնակչության թիվն է 100 մլն-ից ավել:

1. Պակիստան, Մեքսիկա, Եթովպիա, Նիգերիա
2. Ինդոնեզիա, Չամբիա, Իրան, Մավրիտանիա
3. Ֆիլիպիններ, Թայլանդ, Մալայզիա, Թունիս
4. ԱՄՆ, Կանադա, Մադագասկար, Չինաստան

28. Նշված երկրներից ո՞րն է առաջատար կապիտալի արտահանման և ներմուծման ծավալներով:

1. Գերմանիան
2. ԱՄՆ-ն
3. Ճապոնիան
4. ԱՄԷ-ն

29. Ո՞րն է համարվում աշխատանքի աշխարհագրական միջազգային բաժանման բարձրագույն աստիճան:

1. ծովային կառապանների ստեղծումը
2. ազատ տնտեսական գոտիների ստեղծումը
3. օֆշորային գոտիների ստեղծումը
4. միջազգային տնտեսական միասնացումը

30. «Մարզ — լեռնաշղթա» գույգերից որո՞ւմ կա սխալ:

1. Թեքսարի լեռներ – Վայոց ձորի մարզ
2. Կենաց լեռներ - Տավուշի մարզ
3. Բովաքարի լեռներ - Լոռու մարզ
4. Երանոսի լեռներ – Արագածոտնի մարզ

31. Հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ.

1. Լոռու մարզի կենտրոնական մասով է անցնում Հայաստանի գլխավոր երկաթուղին:
2. Վարդենիսի և Գեղամա լեռներում գրեթե բացակայում են հրաբխային կոները:
3. Լոռվա մարզը, մինչև երկրաշարժը հանրապետությունում շաքարի ճակնդեղի ամենախոշոր մշակողն էր:
4. Տավուշի մարզի մակերևույթի բացարձակ բարձրությունը հարավից դեպի հյուսիս աստիճանաբար ցածրանում է:
5. Սյունիքի մարզը խիստ կարևոր տրանսպորտաաշխարհագրական տարանցիկ նշանակություն ունի:
6. Երևան քաղաքի մեծ մասը նստած է գրանիտային հզոր շերտի վրա:
7. Երևան քաղաքի համար հեռանկարային են համարվում հատկապես գիտատար և բարձր տեխնոլոգիաների վրա հենվող ճյուղերը:

32. Ո՞ր շարքերի բոլոր լճերն ունեն սառցադաշտային ծագում:

1. Մեծ Արջի, Աթաբասկա, Ալ
2. Վեներն, Վետերն, Լադոգա
3. Օնեգա, Քարի, Վիննիպեգ
4. Տիտիկակա, Պոոպո, Կուրիլսկոե
5. Քարի, Սև, Ստրուկների Մեծ
6. Կապույտ, Պարզ, Աժդահակի
7. Թանա, Ռուդոլֆ, Խանչալի

33. Հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ:

1. Մթնոլորտային օդը դասվում է բնական ռեսուրսների շարքին:
2. Ներկայումս մթնոլորտում թթվածնի քանակությունն ավելանում է տարեկան 10 մլրդ տոննայով:
3. Հիմնական ջերմոցային գազերից են ածխածնի երկօքսիդը, մեթանը, ազոտի ենթօքսիդը:
4. Լոնդոնյան սմոգն առաջանում է տարվա տաք շրջանում:
5. ԱՄՆ-ն, Չինաստանը, Հնդկաստանը ճապոնիան, Գերմանիան մթնոլորտն առավել աղտոտող երկրներից են:
6. Խողովակաշարային տրանսպորտը համարվում է ջերմոցային գազերի արտանետման հիմնական աղբյուր:
7. Աշտարակ, Իջևան, Գավառ և Գյումրի քաղաքները համարվում են ՀՀ-ում առավել աղտոտվածներից:

34. Եվրասիայի վերաբերյալ ո՞ր պնդումներն են սխալ:

1. Մայրցամաքի պլատֆորմային շրջաններում սեյսմիկ և հրաբխային երևույթները ներկայումս գրեթե չեն արտահայտվում:
2. Մայրցամաքի տարածքի մեծ մասի վրա ազդում են արևելքից ներթափանցող բարեխառն օդային զանգվածները:
3. Ֆիլիպինների հարավում, Հնդկաչին թերակղզու հարավում և Մալայան կղզիներում տարածվում է հասարակածային կլիմայական գոտին:
4. Ուրալը, Կուրը, Արաքսը, Տիգրիսը և Վոլգան կենտրոնաասիական ներքին անհոսք ավազանին պատկանող գետերից են:
5. Ինդոնեզիայի Կալիմանտան և Սումատրա կղզիներում աճում է աշխարհի ամենամեծ ծաղիկը՝ ռաֆլեզիան:
6. Բարեխառն անտառների զոնան լավ է յուրացված հատկապես եվրոպական մասում:
7. Մնացորդային ծագման հայտնի լճերից են Կասպիցը և Արալյանը:

35. Հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ:

1. Կաթի համաշխարհային արտադրանքի ավելի քան 30% բաժին է ընկնում Արևմտյան Եվրոպայի երկրներին:
2. Խոզաբուծությունն ապահովում է աշխարհում սպառվող մսամթերքի 2/5-ը:
3. Նիզերիան, ՀՀ-ն, Նորվեգիան, Շվեդիան թռչնաբուծությամբ աշխարհի առաջատար երկրներից են:
4. Գյուղմթերքի քանակի ավելացումը ցանքատարածքների և անասունների գլխաքանակի ավելացման հաշվին կոչվում է գյուղատնտեսության վարման ինտենսիվ եղանակ:
5. Էկվադորը, Բրազիլիան, Մեքսիկան, Հնդկաստանը, Ֆիլիպինները և Ինդոնեզիան բանանի գլխավոր մշակողներն ու արտահանողներն են:
6. Ըստ Թյունենի տեսության գյուղատնտեսության առավել ինտենսիվ ճյուղերը տեղաբաշխվում են սպառողին ավելի մոտ:
7. Աշխարհի տնտեսապես ակտիվ բնակչության 40 տոկոսը զբաղված է գյուղատնտեսության մեջ:

36. Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:

1. Քաղցրահամ ջրի պաշարներով առաջատարը Կանադան է, որին հաջորդում է Բրազիլիան, վերջինիս էլ՝ ՌԴ-ն:
2. ՌԴ-ն անգերազանցելի է հիմնական բնական ռեսուրսների անփոխարինելի տեսակ հանդիսացող տարածքով:
3. Երկաթաքարի պաշարների կեսից ավելին գտնվում է միայն մեկ հանքավայրում:
4. ՌԴ-ն աշխարհում առանձնանում է երկրաջերմային էներգիայի հարուստ պաշարներով:
5. ՌԴ-ի հողային ֆոնդի կեսից ավելին անտառային հողերն են:

6. Նավթի համաշխարհային պաշարների մոտ կեսը գտնվում է ՌԴ տարածքում:
7. ՌԴ գազի հանքավայրերի գերակշիռ մասը գտնվում է Հյուսիսային Կովկասում:

37. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:

1. Քաղաքակրթական խավարին նախորդել է Հին Հռոմի կործանումը:
2. Արևմտաեվրոպական քաղաքակրթության զարգացման գլխավոր խթանը եղել է արդյունաբերական կապիտալիզմի ձևավորումը:
3. Եվրոպական միասնացման գործընթացի սկիզբը դրվել է Գերմանիայի արտգործնախարար Ռ. Շումանի և ֆրանսիացի Ժ. Մոնեի կողմից մշակված ծրագրով:
4. Նորվեգիան, Իսլանդիան և Շվեյցարիան եվրամիության կազմի մեջ չեն մտնում:
5. Սերբիան և Ալբանիան ԵՄ Արևելյան գործընկերության անդամ երկրներ են:
6. Ընդհանուր շուկայի ձևավորումը արագացրեց ԵՏՀ անդամ երկրների վերազգային մոնոպոլիաների վերափոխումը ազգայինի:
7. Եգիպտական մշակութային ժառանգության երկարատև և խորքային ազդեցությունը արևմտաեվրոպական քաղաքակրթության ձևավորումը պայմանավորող գլխավոր գործոններից է:

38. «Լեռնաշղթա — ծագում — գագաթ» շարքերից որոնց՞ում սխալ կա:

1. Վիրահայոց լեռներ-ծալքաբեկորավոր-Լավվար
2. Ծաղկունյաց-ծալքաբեկորավոր-Թեղենիս
3. Արցախի լեռներ-հրաբխային- Մեծ Քիրս
4. Ծաղկանց լեռներ- հրաբխային-Թոնդրակ
5. Ջավախքի լեռներ- հրաբխային- Աչքասար
6. Բյուրակնի լեռներ-ծալքաբեկորավոր-Սրմանց
7. Հաքյարի լեռներ- ծալքաբեկորավոր- Մարութասար

39. «Արդյունաբերության ճյուղ—տեղաբաշխման գործոնի ազդեցություն» զույգերից որո՞նք են սխալ:

1. մսի արտադրություն-վառելիքաէներգետիկ ռեսուրս (վճռորոշ)
2. պղնձի, կապարի արտադրություն- պատրաստի արտադրանքի սպառման շրջաններ (վճռորոշ)
3. թեթև արդյունաբերություն-վառելիքաէներգետիկ ռեսուրս (վճռորոշ)
4. էլեկտրաէներգետիկա – աշխատանքային ռեսուրս (վճռորոշ)
5. սինթետիկ կաուչուկ- աշխատանքային ռեսուրս (բացակայում է)
6. սարքաշինություն- աշխատանքային ռեսուրս (վճռորոշ)
7. հացաթխման արտադրություն- պատրաստի արտադրանքի սպառման շրջան (վճռորոշ)

40. Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Արևելյան Եվրոպայում անտառները տարածված են գլխավորապես հյուսիսային և լեռնային շրջաններում:
- 2) Հարավային Ասիայում բնակչությունը բազմազգ է, բազմալեզու և բազմակրոն:
- 3) Հարավարևմտյան Ասիայում է կենտրոնացած նավթի համաշխարհային պաշարների 2/3-ը:
- 4) Իրանի տնտեսական զարգացման հզոր գործոն է Կասպից ծովը:
- 5) Կոլումբիան աշխարհում առաջին տեղն է գրավում կակաոյի մշակությամբ:
- 6) Հարավարևելյան Ասիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 7) Ճապոնիայի ներքին փոխադրումներում կարևորագույն դերը պատկանում է երկաթուղային տրանսպորտին:

41. Հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) ՄՉՀ-ի ամենացածր ցուցանիշ ունեցող 15 երկրներից 14-ը Աֆրիկայում են:
- 2) 2015 թվականի տվյալներով աշխարհի առավել հետամնաց տարածաշրջաններում և երկրներում ապրում է աշխարհի բնակչության մոտ 23%-ը:
- 3) Աշխարհի հարուստ և աղքատ բնակչության եկամուտների տարբերությունը պարբերաբար մեծանում է:
- 4) Պարենային հիմնախնդրի բուն էությունը պարենի վերաբաշխումն է և նպատակային օգտագործումը:
- 5) Պարենամթերքի արտադրության աճը բնակչության աճի տեմպերից հետ է մնում զարգացած երկրների շուրջ 60 տոկոսում:
- 6) Աշխարհի մշակովի հողատարածությունների մեծ մասն օգտագործվում է 3 գլխավոր հատիկային բույսերի՝ ցորենի, բրնձի և եգիպտացորենի մշակության համար:
- 7) Աղքատների բացարձակ թվով աշխարհում առաջին Սուդանն է:

42. Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.

1. Երկրակեղևի սալերի տեղաշարժը սկսվել է մոտ 200 մլն տարի առաջ:
2. Բայկալյան և կալեդոնյան ծալքավորությունները գոյացել են արխեյան դարաշրջանի ստորին փուլում:
3. Անթրոպոգեն փուլում, կլիմայի ցրտեցման հետևանքով մեծ քանակությամբ ջուր է կուտակվել սառույցի տեսքով ցամաքի վրա՝ օվկիանոսի մակարդակն իջեցնելով 100-120մ-ով:
4. Կայնոզոյան դարաշրջանի պարզունակ անապատային լանդշաֆտներում, ցամաքի վրա գոյություն ունեին միայն բակտերիաներ:
5. Վերջին 100 տարվա ընթացքում համաշխարհային օվկիանոսի մակարդակը բարձրացել է մոտ 16 սմ-ով:

6. Վերջին սառցապատումը վերացել է 40 հազար տարի առաջ:
7. Ալպյան ծալքավորությունը տարբեր ուժգնությամբ շարունակվում է մինչև օրս:

43. Քաղաքները գտնվում են հասարակածի վրա: Նրանց միջյ հեռավորությունը 5994 կմ է: Ա կետը գտնվում է արլ. ե. 17° - ի վրա: Բ կետը գտնվում է նրանից դեպի արյմուտք: Որոշել Բ կետի երկայնությունը:

44. Երկրի տարածքը 4 մլն կմ² է, բնակչության միջին խտությունը 150 մարդ/կմ², իսկ երկաթաքարի պաշարները 3 մլրդ տ. է: Հաշվել ռեսուրսաապահովվածությունը:

45. Լեռան ստորոտով անցնում է 720 իզոթարը, իսկ գագաթով՝ 340 -ը: Լեռը գտնվում է 45° աստիճանի զուգահեռականի վրա: Հաշվել լեռան գագաթի բացարձակ բարձրությունը մետրերով, հաշվարկը կատարելով 100 մմ ս.ս.-ով:

46. Լեռան ստորոտում մթնոլորտային ճնշումը 680 մմ ս.ս. է, իսկ գագաթին՝ 340 : Գագաթին ջերմաստիճանը -4°C է, որոշել ջերմաստիճանը լեռան ստորոտին՝ հաշվարկը կատարելով 100 մմ ս.ս. - ով $\pm 5^\circ\text{C}$ -ով :

47. Գետի թեթությունը կազմում է $0,8$ մ/կմ: Որոշել գետի երկարությունը, եթե գետաբերանի բարձրությունը -28 մ է, իսկ ակունքի բարձրությունը՝ 252 մ:

48. Բնակավայրը գտնվում է հյուսիսային կիսագնդում: Որոշել դրա աշխարհագրական լայնությունը, եթե սեպտեմբերի 23-ին Արեգակի ճառագայթների անկման անկյունը կազմում է 63° :

49. Վանկուվեր քաղաքի բնակչության թիվը 2 մլն մարդ է: Քաղաքից արտագաղթը կազմել է 140 հազար մարդ, իսկ ներգաղթը՝ 160 հազար: Հաշվել միգրացիայի ինտենսիվության գործակիցը:

50. Երկրի բնակչության բացարձակ թիվը փոփոխվել է՝ 46 մլն-ից դարձել է $46,7$ մլն մարդ: Մեխանիկական շարժը -56000 մարդ: Որոշել բնակչության բնական աճի գործակիցը պրոմիլներով:

51. Երկրի բնակչության թիվը կազմում է 53 մլն մարդ: Որքանո՞վ կավելանա բնակչության թիվը մեկ տարվա ընթացքում, եթե բնական աճի գործակիցը $1,5\%$ է (մեխանիկական աճը համարել 0):

52. Որոշել բնակավայրի աշխարհագրական լայնությունը, եթե հայտնի է, որ տվյալ վայրում դեկտեմբերի 22-ին Արեգակի ճառագայթների անկման անկյունը կազմում է $17,5^\circ$:

53. Ճանապարհորդը 4 կմ շարժվեց 270° ազիմուտով, ապա շարժումը շարունակեց 3 կմ 180° ազիմուտով: Շարժվելուց հետո ցանկացած վերադառնալ սկզբնակետ: Քանի՞ կմ պետք է անցնի ճանապարհորդը ամենակարճ ուղիով՝ սկզբնակետ վերադառնալու համար, եթե նրա ճանապարհին խոչընդոտ չկա:

Արյմսյան կիսանգնդում, 19-րդ ժամային գոտում գտնվող U քաղաքից, ժամը 10^{00} ինքնաթիռը թռավ դեպի Լոնդոն, թռիչքը տևեց 7 ժամ, այնուհետո թռիչքը շարունակեց

դեպի **Բ** ֆաղաք 12 ժամ 9-րդ ժամային գոտի, հետո **Գ** ֆաղաք՝ 9 ժամ 10-րդ ժամային գոտի:

54. Տեղական ժամանակով ժամը քանի՞սը կլինի **Բ** ֆաղաքում, վայրեջքի պահին:

55. Քանի՞ ժամ կպահանջվի սկզբնակետից **Ա** ֆաղաքից **Գ** ֆաղաք հասնելու համար:

56. Նավթի հետախուզված պաշարները կազմում են 700 մլն բարել, տարեկան արդյունահանումը կազմում է 35 մլն բարել: Որոշել տվյալ երկրի ռեսուրսապահովվածությունը նավթով, եթե արդյունահանման ծավալները մնում են անփոփոխ:

57. Ատլանտյան օվկիանոսի արչադարձային և մերձարչադարձային գոտիներում ջրի միջին աղիությունը կազմում է 37,25 պրոմիլ: Հաշվել քանի գրամ աղ է լուծված 4լ ջրում:

58. Քանի՞ կվտ/ժ էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 5 տ նավթի այրումից (նավթի ջերմային գործակիցը 1,5):

59. Բրազիլիայի տարածքը 8,5 մլն կմ² է, որքան մակերես կգբաղեցնի 1: 25 000 000 մասշտաբի քարտեզում:

60. Երկրում ցանքատարածությունների մակերեսը 50 000 քառ. կմ է: Ցորենի բերքատվությունը 60 գ/հա է: Քանի՞ տոննա բերք է ստացվել: